

թե «Յայտնի եւ անծածուկ են այնոցիկ, որ ընդ իմով իշխանութեամբ են եւ հրամանի իմում ընդդիմանալ չիշխեն ամենեւին. բայց ես ի ձեռք կամիմ լսել, եւ զձեր ճանաչողութիւնդ կամիմ գիտել, եթէ զի՞նչ հաշուեալ կարծեք զիս. ասացէ՛ք ցիս»: 8 Եւ նոցա պատասխանի արարեալ ասացին, եթէ «Մեք զձեզ թագաւոր գիտեմք, որպէս ամենեցունց՝ առաւել եւս մեր. իշխանութիւն ունիս նման Աստուծոյ ի վերայ մեր եւ ամենայն մարդոյ որ է ի թագաւորութեան քում՝ սպանանել եւ կեցուցանել»:

9 Եւ Յազկերտի արքայի լուեալ ի նոցանէ եւ ամենայն դրանս աւագանւոյն զայսպիսի պատասխանիս՝ ասէ ցնոսա թագաւորն Յազկերտ. «Այդ պատասխանիք ձեր ի նամակէն, զոր ետուք բերել առ իս՝ շատ հեռի են եւ անմանաբ: 10 Վասն զի ի նամակին յայտ արարեալ էր, եթէ է իւրիք, որովք՝ ծառայեմք քեզ եւ կամաց քոց եւ հրամանի չընդդիմացեալք հաւանիմք. եւ է ինչ, զոր ոչ քեզ պարտ է ասել եւ ո՛չ մեզ հնար է՝ հնազանդել եւ յանձն առնուլ: 11 Արդ՝ ի մեր թագաւորութենէս եւ ամենայն Արեաց՝ ի ձեռք նախ եւ առաջին կարելոր եւ պիտոյ խնդիր այդ է, եւ այդու ճանաչի մեր առ ձեզ տերութիւն եւ ինամարկութիւն, եւ ձեր առ մեզ արդարամտութեամբ ծառայութիւն եւ հնազանդութիւն. զի զվաստակոյ եւ զաւգտէ, որ մինչեւ ցայսաւր ձեր առ մեզ թագաւորս եւ առ Արեաց աշխարհս ցուցեալ՝ գոհ ենք. եւ արդ կամիմ պատուով եւ մեծամեծ փառաւք արձակել զձեզ յաշխարհն ձեր. միայն եթէ զայդ եւս զիմ զկամս³, որ վասն ձեր հոգւոյ փրկութեան հոգացաք՝ յանձն առնուք եւ դառնայք ի կորստեան ճանապարհէն, յորում ցայժմ իբրեւ զկոյր մի ի խաւարի շրջեալ էիք: 12 Ապա եթէ այլազգագոյն ինչ խորհիք, եւ արդարեւ յորում միտս եւ մոլար աւրէնս ցայժմ կեցեալ էք եւ ի նմին յամառեալ պնդիք դուք, Յայք, Վիրք եւ Աղուանք՝ առ ոչինչ համարիմ զայնչափ ի ձեռք աւգուոսս եւ զվաստակս⁴, այլ կնաւ եւ որդւովք եւ ազգաւ կորուսանեմ ի միջոյ»:

13 Եւ լուեալ զայս ամենայն բանս, պատուոյ եւ խոստմանց եւ մահու սպառնալեաց, ի թագաւորէն Պարսից Յազկերտէ երեցունց⁵ աշխարհաց ազատանւոյն՝ լռեցին առ վայր մի այլքն. բայց յառաջ կացեալ աներկիւղ եւ քաջասիրտ մտաւք Վարդանայ Մամիկոնեից տեառն եւ Յայոց սպարապետի⁶՝ պատասխանի ետ թագաւորին Յազկերտի առաջի ամենայն բազմու-

1 ՏՏ. եթէ իւրիք իւրիք՝ որովք. 2. այսպէս՝ քերուածներով

2 ՏՏ. չիք հնար է

3 Ատ. միայն թէ զայդ եւս իմ զկամս. ԲԳտ. միայն թէ զայդ եւս զիմ կամս

4 ՏՏ. եւ վաստակս

5 Ատ. երիցունց

6 2. նախ՝ ասպարապետի, յետոյ՝ ա-ն քերուած